ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-3

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

31.10.2023 թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում էին գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Գ. Սիրոյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Թ. Վարդանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Դ. Աֆյանը, Ա. Մուրադյանը, ՈՒԳԸ նախագահ Թ. Ջանվելյան, ՈՒԽ-ի նախագահ Ի. Բադիրյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին(զեկ. Ա. Մարգարյան):
2. Առկա ուսուցման համակարգում 2023-2024 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների բաշխված ցանկի հաստատման մասին (զեկ.Գ.Սիրոյան, Գ. Հովհաննիսյան):
3. Հաղորդում 1-ին կիսամյակում նախատեսված (առկա ուսուցման) հետազոտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ (զեկ.Գ. Սիրոյան, Գ. Հովհաննիսյան):
4. Հեռակա ուսուցման դասատախտակների քննարկման և հաստատման մասին (զեկ. Ա. Մարգարյան):
5. Ընթացիկ հարցեր.

Բաց քվեարկությամբ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

- Հաստատել նիստի օրակարգը:

1. ***Լսեցին.- 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին/ զեկ. Ա. Մարգարյան/:***

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են կազմակերպել ս.թ հոկտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 3-ը ընկած ժամանակահատվածում: Կազմվել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ժամանակացույցերը (ժամանակացույցերը կցվում են): Դեկանի պաշտոնակատարը նշեց, որ ժամանակացույցը այնպես է կազմվել, որ ուսանողը մեկ օրում ունենա մեկ ընթացիկ քննություն կամ ստուգում: Համապատասխան մասնագիտական ամբիոնները ըստ կրթական ծրագրերի նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետում պատրաստել են տոմսերը, թեստերի նմուշները:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաղորդումը I կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին ընդունել ի գիտություն

2. Լսեցին – 2023-2024 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակների հաստատման մասին /զեկ. Գ. Սիրոյան, Գ. Հովհաննիսյան/:

Ա. Մարգարյանը ներկայացրեց, որ 2023-2024 ուստարում ֆակուլտետի երկու մասնագիտությունների գծով նախատեսված ավարտական աշխատանքի թեմաների նախագծերը ուսանողներին է տրամադրվել կարգով սահմանված ժամկետներում: Որոշակի ճշգրտումներից հետո ամբիոններում կատարվել է ավարտական աշխատանքների բաշխում ըստ դասախոսների և ուսանողների:

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ առկա ուսուցման համակարգում ունենք Արցախից բռնի տեղահանված մեկ ուսանող, ով վերականգնվել է Ֆինանսներ ըստ ոլորտի չորրորդ կուրսում: Արցախից տեղափոխված ուսանողը սովորել է Տնտեսագիտության տեսություն մասնագիտությամբ: Նրան հատկացվել է ավարտական աշխատանքի թեմա, որը կղեկավարի ամբիոնի դոցենտ Տ.գ.թ. Գ. Ավետիսյանը:

Արտահայտվեցին – Գ. Սիրոյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նրանք նշեցին, որ ամբիոնների նիստերում քննարկվել և ճշգրտվել են առկա ուսուցման ավարտական աշխատանքի թեմաները՝ հաշվի առնելով ուսանողների նախասիրություններն

ու առաջարկությունները: Համաձայն անհատական ծանրաբեռնվածության «Ընդհանուր տնտեսագիտության» և «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների նիստերում քննարկվել և հաստատվել են ավարտական աշխատանքների թեմաները ըստ ղեկավարների և ուսանողների, որոնք այժմ ներկայացվում են ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը /ցանկերը կցվում են/:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմանդրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին – հաստատել «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն»(առկա) մասնագիտությունների 2023-2024 ուստարվա՝ ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ավարտական աշխատանքների ցուցակները:

3. Լսեցին- Հաղորդում 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակում (առկա ուսուցմամբ) նախատեսված հետազոտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ (զեկ.Գ. Հովհաննիսյան, Գ. Սիրոյան):

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ առաջին կիսամյակ Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնում հետազոտական բաղադրիչով դասընթացները երեքն են: Նախորդ տարվա փորձից ելնելով, կարելի է արձանագրել, որ այս տարի հետազոտական աշխատանքների հարցում փոքր-ինչ ուսանողները հմտացել են: Աշխատանքները վերահսկվում են ամբիոնի կողմից և ընթացքի մեջ են: Գ. Հովհաննիսյանը նշեց նաև, որ ամբիոնի դասախոսների առաջարկությամբ հետազոտական որոշ աշխատանքներ ուսանողները կարող են դարձնել ավարտական՝ հետագայում կատարելով ավելի խորը ուումնասիրություն:

Գ. Սիրոյանը նշեց, որ այս կիսամյակում Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի չորս դասընթացներում ներառված է հետազոտական բաղադրիչ: Նա նշեց, որ հետազոտական աշխատանքի ներդրումն արդյունավետ է և միտված է գլխավոր նպատակի իրականացմանը, այն է՝ չորրորդ կուրսի ուսանողների պատրաստվածությունը ավարտական աշխատանք կատարելուն:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2023-2024ուստարվա 1-ին կիսամյակում նախատեսված հետազոտական աշխատանքների կատարման ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. Լսեցին.- Հեռակա ուսուցման դասապահպակների քննարկման և հաստատման մասին (զեկ. Ա. Մարգարյան):

Ա. Մարգարյանը նշեց, որ հեռակա ուսուցման առաջին կիսամյակի դասատախտակը կազմվել է ըստ ուսումնական պլանի՝ հաշվի առնելով դասախոսների հերթափոխը և լսարանային ֆոնդը: Դասացուցակները քննարկվել են մյուս ֆակուլտետների դեկանների պաշտոնակատարների հետ և վերացվել են գուգադիպումները: Դրանք համաձայնեցված են դասախոսների հետ:

Դեկանի պաշտոնակատարը հաղորդեց, որ երկու մասնագիտությունների գծով կազմված դասատախտակները հարմար պայմաններ են ապահովում արդյունավետ դասապրոցես իրականացնելու համար:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հեռակա ուսուցման դասապահպակները ներկայացնել ՈՒՄՎ հաստատման:

Գիտական խորհրդի նախագահ՝ ***Ա. Մարգարյան***

Քարտուղար՝ ***Ա. Ալեքսանյան***